ՀՀ ԿԳՄՍ նախարարության Հանրակրթության
վարչության պետի պարտականությունները
կատարող ՍՈՒՍԱՆՆԱ ԱԶԱՏՅԱՆԻՆ
Հանրակրթության վարչության փորձագետ
ԼԻԼԻՅԱ ՍԱՐՈՒԽԱՆՅԱՆԻՑ

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
2023 թ.-ի մարտի 10-ից հունիսի 10-ը

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության գլխավոր քարտուղարի 10.03.2023թ.-ի № 37-Ա/1 հրամանի համաձայն նշանակվել եմ նախարարության հանրակրթության վարչության փորձագետ:

Ստորև ներկայացնում եմ հաշվետու ժամանակահատվածում իրականացված աշխատանքների հաշվետվությունը.

1. Իրականացրել եմ ՀՀ կառավարության 2021 թվականի օգոստոսի 18-ի N 1363-Ա որոշմամբ հաստատված՝ ՀՀ կառավարության մինչև 2026 թվականը «Մարդկային կապիտալի զարգացում» բաժնի «Կրթություն» ենթաբաժնում նախատեսվող՝ մինչև 2026 թվականը կառուցվող, հիմնանորոգվող կամ վերանորոգվող 300 դպրոցների և 500 մանկապարտեզների ծրագրի շրջանակում նախատեսված ՀՀ բոլոր մարզերի կառուցվելիք կրթահամալիրների և առանձին դպրոցների և մանկապարտեզների ցանկերի կազմման աշխատանքները՝ համագործակցելով մարզպետարանների համապատասխան ստորաբաժանումների աշխատակիցների հետ:

2. Փոփոխություն և լրացումներ եմ կատարել Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2022 թվականի օգոստոսի 26-ի N 21-Լ հրամանում (23.05.2023թ.-ին հաստատված № 24-Լ հրաման):

3. 2023 թվականին շինարարությունը ավարտվող դպրոցների տնօրենների հետ համագործակցելով՝ կազմել եմ վերոնշյալ դպրոցներին անհրաժեշտ գույքի ցանկերը:

4. Պարբերաբար ՀՀ վարչապետի աշխատակազմ եմ ներկայացրել տեղեկատվություն ՀՀ կառավարության մինչև 2026 թվականը «Մարդկային կապիտալի զարգացում» բաժնի «Կրթություն» ենթաբաժնում նախատեսվող՝ մինչև 2026 թվականը կառուցվող, հիմնանորոգվող կամ վերանորոգվող 300 դպրոցների և 500 մանկապարտեզների ծրագրի ընթացիկ աշխատանքների վերաբերյալ:

5. Ընթացիկ հանձնարարականների կատարում:

Հանրակրթության վարչության փորձագետ՝ Լիլիյա Սարուխանյան